



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ 215

18 հուլիս 2019թ.

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների մասին» օրենսգրքի 154¹-րդ հոդվածի 1-ին մասով և 219¹-րդ հոդվածով և հիմք ընդունելով վարչական հանձնաժողովի 2019 թվականի հուլիսի 18-ի թիվ 9 նիստի արձանագրությունը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. «Ալվինա հյուրանոցային համալիր» փակ բաժնետիրական ընկերության /ՀՎՀՀ 04418524, հասցե՝ Արմավիրի մարզ, քաղաք Արմավիր, Թումանյան 36/ նկատմամբ, կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում չավարտելու համար նշանակել տուգանք՝ 4 000 000 (չորս միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2. Տուգանքը վճարել սույն որոշումը ստանալու օրվանից 15 օրվա ընթացքում Ծաղկաձոր համայնքի բյուջե՝ 900125002114 հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրը:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

5. Վճարումը սահմանված ժամկետում չիրականացնելու և որոշումն անբողոքարկելի դառնալու դեպքում գումարը կգանձվի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:



ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 216

22 հուլիս 2019թ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 104-Ն որոշումը և համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 10-ի թիվ 04 որոշումը, ինչպես նաև Ծաղկաձոր համայնքի բնակչուհի Ալվարդ Բենիկի Առաքելյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Օրբելի Եղբայրների նրբանցք, շենք 6, բնակարան 4 հասցեի բնակչուհի Ալվարդ Բենիկի Առաքելյանին տրամադրել դրամական օգնություն 50 000(հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ ընտանիքում առաջացած առողջական և սոցիալական խնդիրների լուծման նպատակով :



ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ 217

22 հուլիս 2019թ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 104-Ն որոշումը և համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 10-ի թիվ 04 որոշումը, ինչպես նաև Ծաղկաձոր համայնքի բնակչուհի Ամալյա Բաղալի Մանասյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Գրիգոր Մազիստրոսի փողոց, շենք 2, բնակարան 24 հասցեի բնակչուհի Ամալյա Բաղալի Մանասյանին տրամադրել դրամական օգնություն 40 000(հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ առողջական և սոցիալական խնդիրների լուծման նպատակով:



ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ 218

23 հուլիս 2019թ.

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ հինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Արսեն Մկրտչյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել Ծաղկաձոր համայնքում Նոր թաղամաս 2-րդ փողոց թիվ 30 հասցեում գտնվող, Արսեն Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող(վկայական N0090605 տրված 1999 թվականի դեկտեմբերի 14-ին) հողամասում ինքնական կառուցված 507,9 ք.մ. արտաքին մակերեսով բնակելի տունը և 8,32 ք.մ. մակերեսով պարիսպը:
2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը բնակելի տան օրինականացման համար վճար չի գանձվում:



(Handwritten signature)

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 219

23 հունիս 2019թ.

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ծաղկաձոր համայնքում Աշոտ Ավետիքի Մուրադյանին վարձակալության իրավունքով պատկանող 0,003 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների նրբանցք թիվ 25:



ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԾՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ 220

23 հուլիս 2019թ.

ԲԱՏՈԹՅԱ ԱՌԵՎՏՈՒՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աշոտ Հարությունյանին տալ քաղաք Ծաղկաձոր, Ծաղկունյաց հրապարակի հարակից տարածքում, 2 քմ մակերեսի վրա սույն թվականի հուլիսի 23-ից մինչև սույն թվականի օգոստոսի 20-ը ընկած ժամանակահատվածում՝ 29 օր, բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



(Handwritten signature)

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱԿ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ 221

23 հուլիս 2019թ.

**ԲԱՅՕԹՅԱ ԱՌԵՎՏՈՒՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաջիկ Վարդանյանին տալ քաղաք Ծաղկաձոր, Գրիգոր Մազիստրոս փողոցում՝ Հայփոստի հարևանությամբ, 1 քմ մակերեսի վրա սույն թվականի հուլիսի 23-ից մինչև սույն թվականի օգոստոսի 20-ը ընկած ժամանակահատվածում՝ 29 օր, բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Ն. Արթուրյան

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ 222

25 հուլիս 2019թ.

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Արսեն Հովհաննեսի Սեմիրջյանին սեփականության իրավունքով պատկանող, ք.Ծաղկաձոր նոր թաղամաս հասցեում գտնվող 0,06 հա մակերեսով (վկայական համար 1494882) հողամասի, ք.Ծաղկաձոր նոր թաղամաս հասցեում գտնվող 0,06 հա մակերեսով (վկայական համար 1494883) հողամասի, ք.Ծաղկաձոր նոր թաղամաս հասցեում գտնվող 0,06 հա մակերեսով (վկայական համար 1494884) հողամասի և ք.Ծաղկաձոր նոր թաղամաս հասցեում գտնվող 0,06 հա մակերեսով (վկայական համար 1494881) հողամասի միավորման հետևանքով առաջացած 0,24 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր Պահլավունյաց փողոց թիվ 65:



ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 223

26 հուլիս 2019թ.

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ հինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Աշոտ Մուրադյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել ն Ծաղկաձոր համայնքի Օրբելի Եղբայրների նրբանցք, թիվ 25 հասցեում գտնվող, Աշոտ Մուրադյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված 7 քառ.մ արտաքին մակերեսով շինությունը:
2. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Շինությունների օրինականացման համար սահմանել վճար՝ 18 200 (տասնութ հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, որը անհրաժեշտ է վճարել 900125002478 հաշվեհամարին:



ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 224

26 հուլիս 2019թ.

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 14 ՈՐՈՇՄԱՆ
ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 15-ի թիվ 45-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2019 թվականի հունվարի 17-ի «Ծաղկաձոր համայնքի 2019 թվականի ծախսերի և եկամուտների եռամսյակային համամասնությունները հաստատելու մասին» թիվ 14 որոշման թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ